VOL. II. NO.—36. NEW YORK, MARCH 1, 1890 PRICE TWO CENTS.] Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 36 ՆԻՒ ԵՈՐՔ, ՄԱՐՏ 1 1890 ԳԻՆ ԼՐԿՈՒ ՍԿՈՒԹ

ՎԵՐՋԻ ԼՈՒՐ

— —

Թերթերնիս մամուլի տակ էր երբ հետեւեալ կարեւոր լուրն ստացանք ու որով պարտաւորեցանք տպագրու թիւնն դադրեցնել։ Եւ ազգն լա տարակելու համար, ուստի կը յուսանք թէ մեր ընթերցողք ներողամիտ կըլլան մեր ուշ մնալուն

Այսօր Լոնտոնէ առնուած մի վերջի հեռագիր կըսէ ցոյց թէ Սըր բաղան Պատրիարքի կողմանէ Բարձրագոյն Դիւան սատրկ թագրիր մը տրուած է, պահանջելով առնոմէ Հայկական Եկեղեցւոյ դէմ եղած տրգելութիւնից յետս կոչուին ըլլայ, և Պէռլինի Վեհաժողովոյ մէջ խոստացուած Հայայուսանի բարեւոգմ ապահովագ գործադրութիւնը անպատճառ գործի դրուի,

Հուռռա՛։

Լաւ անդան ք ան երբեք։

Աֆերին Պատրիարք։

Վերջապէս գրլուխը դրիր։ յուսամք թէ զօրութիւնդ կը շարունակես ցոյց տալ, զի Աստուած ընդ մեզ է։

ՃՕՆ ՃԷՅԳԸՊ ԱՍԹԸՐ

Նիւ Եորքի ամենահարուստ անձը անցեալ շաբաթ օր (փետր. 22) վախճանեցաւ առաւօտեան ժամը 4ին սիրտ-ցաւէ բռնուելով՝ որն որ մարդ մկկն ի մկ ի մահ կտանի։ Հարկաւ ամեն օգնութիւն իրեն հասան, բայց ի զուր։ սովաւ յայտ առնել թէ հարստութիւնը ամեն բանի կը հրամայէ և կը յաղթէ, բայց մահէ։ Նա անյաղթելի է։

Վախճանեալ Ճօն Ճէյգըպ Ասթըր անուն անձը եզակի անձ մըն էր իւր վարքովը։ Հարուստ եղողներուն շատերը ցոյցքով և մեծապարծութեամբ կը փառաւորին։ Բայց այս անձը արտասովոր կացութիւն մը ունէր ընկերակցութեան մէջ։ Պարզ ապրիլ, պարզ հագուիլ և պարզ վարուիլ իրեն բնական յատկութիւն մը եղած էր։ Ընկերակցութիւն սիրելուն՝ սեղանէն միշտ հիւրք պակաս չէին։ փողոցը ելած ատեն հագած զգեստներէն մէկը շեր կարծեր թէ նա ամենէն հարուստ մարդն էր, այնչափ պարզ բայց վայելուչ և մաքուր։ Միշտ սև լաթեր կը հագնէր և ո՛ և իցէ գոհարէ զուրկ։ Անձամբ դեր գոլով միշտ քալել կը սիրէր, և երբ հարկ լինէր իրեն կառք նստիլ, փոխանակ իւր յատուկ կառքը հեծնելու՝ հասարակ ութեան կառքերը կը գործածէր։ ոչ թէ կծծի ըլլալուն, այլ փառասէր չերևնալու համար։ Ժողովուրդը առ հասարակ հարստեաց վրայ ծուր աչօք կը նայի։ բայց այս անձը որ ամենէն հարուստն էր ինքզինքը սիրել տուած էր իւր քաղաքավարութեամբը։ Բարեկամի հանդիպած ատեն սրտանց գնա կը բարեւէր և անկեղծութեամբ նորայ հետ կը խօսակցեր։

Այս նշանաւոր անձը այսօր կը թաղուի, ձգելով իրեն ժառանգ իւր միակ որդին Վիլիըմ Վասլտորֆ Ասթը։ Հանգուցեալն Նիւ Եորք քա-

ՃՕՆ ՃԷՅԳԸՊ ԱՍԹԸՐ

ղաքին մէջ ծնած է 1821ին։ Շատ լաւ կրթութիւն տուած է Գոլումպիա Գոլէճին, և յետոյ Գերմանիոյ համալսարաններուն մէջ։ 1846ին ամուսնացաւ հարուստին Գարոլ ինացի շատ գեղեցիկ և սիրուն օրիորդի մը հետ, յորմէ ծնաւ արդի ժառանգն, ինչպէս որ ինքն ալ իւր պապին ժառանգն էր։

Այս պապը որ Ասթը ընտանիքի հիմնադիրն էր, և կ'անուանուէր Ճօն Ճէյքոպ Ասթը և որուն անունը հանգուցեալն ալ կը կրէր, ծնան է 1763ին ի Գերմանիայ, Վորալսօ գիւղին մէջ։ Սորոյ հայրը այդ գիւղը մասամբանութեամբ կը պարապէր, և ունէր չորս զաւակ որոց կրտսերը Ճօն Ճէյքոպն էր։ Սա ուռանդուտ պատանի մը ըլլալով՝ օր մը ելած Լոնտոն գնացած է իւր եղբարցը քով, որ հոն երաշխիքական գործիքներ կը վարէր։ Սորոյ քով խել մը ատեն աշխատելէն յետոյ և իրեն յաջող ապագայ մը չի տեսնելով կելլէ Ամերիկայ կը գաղթէ 1784 ին։ Այս անձը ճամբայ ելած ատեն՝ ունէր բոլոր լաթերն թղթէ սնտուկի մը մէջ և չուանէ կղզակով գոյացեալ զանգուած մը, այսինքն՝ ըկ ծրար մը։ և հետը ունեցած բոլոր գանձը հինգ անգլիական ոսկիէ և 7 ֆլորէնթօք կը գոյանար։ Ճամբորդութեանը մէջ մէկումը հետ կը բարեկամանայ, և այս նոր բարեկամը իրեն պէս բաղդախնդիր մէկը լինելով՝ զինքը կը խրատէ որ իրեն պէս մուշտակավաճառութեան հետեւի, քանզի՝ նա մուշտակագործ լինելով լաւ համոզուած էր թէ մուշտակավաճառութիւնը աւելի որ դիւնաւոր էր քան թէ երաժշտական գործիքներու հետ պարապիլ։ Արդ՝ Ճօն Ճէյքոպ նիւ Եորք հասած ատեն մուշտակավաճառի մը քով աշակերտութեան կը մտնայ շարթը երկու տալար վարձքով։ Նորոյ քով երկու երեք տարի աշխատելով և արհեստին կերպը ու գաղտնիքներուն տեղեկանալով, ինք իր գլխուն առուտուրի կելնէ, պահած հինգ անգլիական ոսկւոյ օգնութեամբ և ֆլորէնթներու փոխառմամբ ստացած դրամովն։ Քիչ ժամանակի մէջ կը յաջողի իւր դրամագլուխը բազմապատկել և անորմէ քաջալերուելով ճամբայ կելնէ վայրենիներուն հետ ուղղակի առուտուր ընելու։ Այս ձեռնարկութիւնը իրեն մեծ յաջողութիւն բերաւ, քանզի՝ վայրենիք որք որսորդութեամբ կը պարապէին, պամուշանք սիրելնուն՝ չէին վարաներ զայնս ստանալու համար մուշտակ տալ իրեն որչափ որ խնդրէր։

Այս կերպիւ և եղանակաւ երբ Ճօն Ճէյքոպի հարստութիւնն ճոխացաւ, ձեռքը անցած աւելորդ դրամով երկիր գնեց և գործը ընդարձակեց, տեղ տեղ մուշտակի առեւտուրի կեդրոններ աւելցնելով, մինչև անգամ Խաղաղական Ովկիանոսի եզերքը, Օսկկոն Նահանգին մէջ, քաղաք մը հաստատելով Ասթորիա անուամբ։ Բայց դէպքերդարար այս ձեռնարկութիւնը իր վրայ սուղի նստեցաւ։ Ամերիկացւոց Անգլիացւոց հետ կռուած ատենին Ասթորիա Անգլիացւոց ձեռքը ինկաւ, և հոն դիպուած խել մը մուշտակներ անոնցմէ կողոպտեցան։ Այս դէպքը շատ տրտմեցուց զԱսթը և պարտաւորեց զնա արտասանելու ՀԷ «իրեն ապագայն կործանած է»։ Բայց բանին կուռթիւնը այնպէս չեղաւ։ ուրիշ տեղեր հաստատած կեդրոններէն յառաջ եկած շահերն և ծախու տուած տեղերուն գինը օրէ օր բարձրանալովն՝ Ասթորիայի վնասը չուտով լեցուեցաւ և ինքը նորէն սկսեց հարստանալ։

Շատ չի քշեց Ասթը ամուսնացաւ և իրեն երեք զաւակ ծնաւ։ Անդրանիկը՝ դեռ երախայ, մեռաւ։ երկրորդը՝ խելագար էր և 60 տարեկան հասակին մէջ մեռաւ։ Ամենէն կրտսերն, որ կ'անուանէր Վիլիամ Պ. Ասթը, ժառանգ մնաց իւր հօրառատ հարստութեան որ ան ատեն 20 միլիոն տալար կը հաշուուէր։ Այս գումարին վրայ շատ հոկտութիւն և խնամ գործածելով՝ երբ Վուիլիամ մեռաւ մէկ զեռօ (0) մն ալ աւելցած գանուեցաւ գումարին առջև։ Երկու զաւակներ ունէր այս անձը։ մին՝ Ճօն Ճէյքոպ, և միւսը՝ Վուիլիամ անուանեալ։ Բոլոր ստացուածքը այս երկուքին մէնայն սա կերպիւ, երեք մասին երկուքը առաջինին և մէկ երրորդը Վուիլիամին։

Ճօն Ճէյքոպ Ասթը որ անցեալ շաբթու հոգին աւանդեց, բանրուն և խնայող մէկը լինելուն, ձեռքն ինկած ստացուածքն այն կերպ բազմապատկեց որ հիմայ անոգին գումարը կը կազմէ, այսինքն երկու հարիւր միլիոն տալար։ Կրսեն թէ Նիւ Եորքի մէջ միայն հազարէն աւելի տուներ ունի որոնցմէ՝ մէկզմէկուվը բայ՝ տարին 2,600 տալար վարձ կառնէ։ ըսել է թէ տարա ժառանգն եթէ միայն տոնէն վերայ բազմի գործ մը չընելով, նորէն անգամ այս ահագին եկամուտը ինքնիրեն այնկերպ պիտի բազմապատկի որ տակէ հարիւր տարի ետքը 1000 միլիոն տալարի պիտի հասնի։ Ահա բաղդին զարմանալի և անըմբռնելի խաղալիքը որն որ ուրիշ երկրի մը մէջ չէ տեսնուած և տեղի չկրնար ունենալ։

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանու կուսակալ Վասա փաշա ուզելով արդելուլ գաւառին բնակչաց գաղթային շարժումն յԱմերիկա, իրը գործնական միջոց՝ առաջարկած է կայս. կառավարութեան՝ հանրօգուտ շինութեանց տարարգ բանալ, ժողովրդեան կարօտ գաւառակարգին գործ գտնելու համար։ Այս նպատակաւ, երկրին ուռոգման ծրագիրն, որուն ազգաւորպէս այժ կուսարն։ Վսեմութիւն, ընդունուած է։ Բացի այս մենաշնորհէն, թրամուլյի գծերու շինութեան և այլ ձեռնարկներու վերաբերեալ մենաշնորհք ևս կը խնդրուին կայս. կառավարութենէն, միջնորդութեամբ Վասա փաշայի։ (Արեւելք)

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կը հրատարակուի առ այժմ ամէն շաբաթ օրեր իւր յատուկ տպարանէն, թիւ 100 Սէնթրը փողոց, Նիւ Եորք, Ն. Ե.

Տնօրէն—Խմբագրապետ ՕՍԿԱՆԵԱՆ
Տէր—Խմբագիր Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Նահանգաց (Նիւ Եորք քաղաքէն դուրս) Քանադայի ու Մէքսիկոյի համար.

Տարեկան Երկու տոլար

Ուրիշ երկրներու համար՝ Երկուքուկէս տոլար

Թղթատարուելու ծախքը խմբագրութեան վրայէ։ Բաժանորդագիրն է կանխիկ վճարելի։ Ծանուցումներ կընդունուին գուացուցիչ պայմաններով։

Նամակ կամ ծրար դրկել հարկ է հետեւեալ հասցէին.

To The Editor of THE AZADOUTIUN,
100 Centre Street,
New York City.

The Azadoutiun

PUBLISHED EVERY WEDNESDAY & SATURDAY

At No. 100 Centre St. New York City.

TERMS TO SUBSCRIBERS, Free of Postage in the United States (outside of New York city limits) and in Canada and Mexico:—

One copy, one year $2,00

Remittances made payable to and all communications addressed to The Editor of The „Azadoutiun", 100 Centre Street, New York City.

Entered at the Post-Office at New York as second class matter.

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ թերթիս պատիւ կը համարիմ ծանուցանել թէ «Ազատութիւն»ի խմբագրութիւնը յանձն առած եմք։ Արդ՝ հասարակութիւնը այս առթիւ խորին ակնածութեամբ ողջունելէ յետ, բացատրեմք թէ ինչպէս եղաւ որ այս ծանր պաշտօնը վրանիս առնիք ընդդէմ բոլոր զբաղմանցս դիմադրութեան։

Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ գտնվող արդի Հայ գաղթականութիւնը երեք հազար հոգիէ աւելի կը հաշուի, և սորա թիւը օր ըստ օրէ բազմանալու վրայ է։ Մեզմէ շատ քիչերուր ուրիշ գաղթականք յատուկ լրագիրներ ունին. և մեզի շատ մեծ ամօթ է որ մեք ևս ազգային լրագիր մը չունենանք հոս, մանաւանդ՝ երբ լրագիր մը անհրաժեշտ պիտոյք մըն է գաղթականաց համար։ Գաղթականք հարկաւ կողմ կողմ ցրուեալ կը գտնվին։ Ասոնք բնազդմամբ իրարու հետ հաղորդակցութիւն և կապակցութիւն կը խնդրեն, որպէս զի իրարու վիճակէ և յաջողութենէ տեղեկանալով պանդխտութեան մէջ մխիթարութիւն գտանեն. դէպ ի դարագայիւք հայրենիքէն դրկուած լինելնուն՝ իրենց սիրեցեալներէն ստիպմամբ բաժնուած լինելով նոցա վիճակաց վրայ տեղեկութիւն ստանալով գոհ լինին։ Ամենքն ալ հայրենասիրութենէ բորբոքեալ կուզեն ևս հայրենեաց ազգային վրայ գաղափար մը ունենալ։ Ազգասիրութեան ջահը ամենու սրտի մէջ միշտ վառ կեցած լինելով կը ցանկան որ լեզուին չը մոռնան։ Նա և օտարաց մեր վրայ ինչ գաղափար և համարում ունենալն իմանալ, որպէս զի չը վհատին մեր արժանավայել ապագայի յոյսէն։ Ասոնց բոլորին ալ մի միայն միջոցն լրագիրն է։

Մինչև վերջի տարիները Հայ գաղթականութիւնը չի կրցաւ կանոնաւոր լրագիր մը ունենալ, ինչու որ՝ հայերէն տառերու պակասութիւնը մէկ կողմէն՝ և գրաշարաց նուազութիւնն միւս կողմէն արգելքներ եղած էին։

Իրաւի ազգասէր և եռանդոտ երիտասարդ մը զինքը չլքապատող դժուարութիւններէն չի վհատելով այս պակասութիւնն բարձաւ իմնջ, հիմնելով մի հայերէն լրագիր։ Բայց իւր իղձ ու եռանդ բաւական չեղան թերթն յաջողութեան հասցընելու համար, որովհետև լրագիր մը կը կարօտի նաև նիւթական և բարոյական աջակցութեան։ Զայս քաջ ըմբռնելով յիշեալ անձն մեզ դիմեց որ բարոյապէս իրեն օգնութեան հասնիմք՝ «Ազատութիւն»ի խմբագրապետութիւնն վրանիս առնելով։ Մենք ևս միշտ ազգասիրութենէ վառեալ և բարեկամաց սոսկմամբ ու խրատովն հաճեցանք համաձայնիլ այս ծանր պաշտօնը վարել, որպէս զի այս գաղթականութիւնը ամօթով չը մնայ ուրիշներու առջև, թէև մեզ ծանր բեռ մը կ'երևի զբաղմանց նկատմամբ։

Մեր գտնուած վիճակին ծանօթ եղողները հարկաւ պիտի անհրկայելի կերպիւ ճանաչեն մեր այս խոստովանութիւնը անապարծութենէ յառաջ եկած չէ՝, այլ անզսպելի կիրքէ մը որ է ազգասիրութիւն։

Ազգասիրութիւնը սարսափելի ախտ մըն է, յորմէ բռնուողաց փրկութիւն չ'կայ բայի գերեզմանի դռնէն։ Ահա այս ախտն է որ սաստկած է մեր նախորդք, պատուարժան և տաղանդաւոր անձինք, մեծ զոհողութիւններ և զարմանալի անձնուրացութիւններ ընել յեւրոպայ Հայկական ազատ մամուլ հաստատելով, մանաւորապէս Մարսիլիոյ «Արմենիա» լրագիրը։ Սորա բարի օրինակաւն խել մը ուրիշ լրագիրներ ծագեցան, մենք ևս պիտի ջանամք այս լրագրաց դասն անցնիլ մեր համեստ օժանդակութեամբը. քանզի՝ քաջ համոզուած եմք, որ սոքա կը կարօտին մեզմէ տեղային լուր առնել, ինչպէս որ մեք ևս պիտոյք ունիմք նոցայ աշխատանաց արդիւնքն վայելել։

Արդ՝ յուսամք թէ մեր աշխատութիւնը պարապ չ'ելներ գաղթականաց և ուրիշ ազգասիրաց կողմանէ։ Ցայսմիկ բան մըն է որ լրագրի մը հրատարակութիւնը մեծ ծախսի և բազում աշխատանաց կը կարօտի. ուստի յուսամք թէ օգնութիւն և քաջալերութիւն պիտի գտնեմք թէ բաժանորդագրութեամբ և թէ մասնաւոր նուիրատուութեամբ որոց համար մեծապէս շնորհակալութիւններս կը նուիրեմք կանխաւ։

ՕՍԿԱՆԵԱՆ

Տարակոյս չունինք թէ ընթերցողք, մանաւորապէս անոնք որք «Ազատութիւն»ի յաջողութեան կը ցանկան, գոհ պիտի լինին մեր նոր կարգադրութեան համար։ Այս առթիւ կը ցաւինք յայտարարել թէ մեր կամքէ անկախ շատ մը պատճառներու համար ստիպուեցանք թերթն պատկերազարդ շաբաթական վերածել՝ առանց փոփոխութիւն մը ընելու բաժնեգնոյն վրայ։ Այս փոփոխութիւններն թէև մեղադրելի ինքնին, բայց ներելի են անշուշտ այն անյաղթելի դժուարութեանց համար որոյ կը բաղխինք երկար ատենների ի վեր։

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԵՒՐՈՊԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Եւրոպիոյ վիճակը խառն ի խառն կացութեան մը մէջ է։ Ժողովուրդը ծանր իրդիներ կը յարուցանէ օր ըստ օրէ, ոչնոյ լուծումը դիւանագիտաց, մասնաւորապէս պաշտօնավարաց ընդդէմ կը խառնակէ և երեսնին կնճռով լեցուցած է։

Մեծն Նարօլէօն ըսած է թէ «օր պիտի ըլլայ որ բոլոր Եւրոպայ կամ հասարակապետութիւն պիտի ըլլայ՝ կամ գազագ»։ Այսինքն՝ կամ ճիշտ ազատութիւն, կամ բռնաւորութիւն։ Ահա այս խնդրոյն լուծումն է որ յուզուիլ սկսած է։

Ամէնուս յայտնի է որ աշխարհիս երեսը երեք տեսակ կառավարութիւն կայ—ինքնակալութիւն, սահմանադրեալ միապետութիւն և հասարակապետութիւն։ Այս երեք տեսակ կառավարութեան գոյութիւնը ժողովուրդին մտաւորական կացութենէն կախում ունի, քանզի՝ կառավարողաց կացութիւնը, կառավարելեաց հաճութեամբը տեղի կ'ունենայ։ Ինչպէս երախայ մը պաշտպանի մը կը կարօտի, նոյնպէս ալ ռամիկ ժողովուրդ՝ դինքը վարողի։ Բայց երբեմն երբ կը մեծնայ բնականաբար իրեն վերարերեալ ընկերական արտօնութիւնները ճանչնալով ըստ չի հաճիր որ իր վրայ հրամայող մ'կը ըլլայ. նմանապէս երբոր ժողովուրդին մէջ մտաց լուսաւորութիւն կը մտնէ կը ջանայ իւր չափահասութիւնը յայտնել իւր անկախութեամբ։ Բայց ինչպէս ամէն մարդ մէկէն ի մէկ կամ միտեղ չափահաս չ'կրնար լինիլ և չէ՝ եղած, ժողովուրդը այս մասին տարբեր դասերու բաժնուած է։ Ահա այս ազգաւ է որ կըսուի «որչափ անձինք՝ այնչափ կարծիք»։ Ժողովուրդի մը քաղաքական կարծեաց տարբերութիւնը կը ծանրանայ երբ միւք կառնեմք ռամկաց նախապաշարումը, քանզի՝ սովորութիւնը երկրորդ բնութիւն է, ուստի՝ դժուար է նորա յաղթել։ Այսու ամենայնիւ՝ ազատ մտամուլ և ընդհանուր կրթութիւնը հրաշալի ներգործութեամբ ժողովուրդը յառաջ մղած են յանկախութեան։ Նորայ որք կարողացան ինքնակալութեան դրութենէ ազատիլ, երբ ստմանադրական միապետութիւն ստացան, այնպէս կարծեցին թէ ընկերական բարօրութեան կացութեան վերջի աստիճանին հասան և անկէ անդին անցնելիքը անհասկնալի թիւն համարած են, Եւրոպիոյ այժմեան շարժումը հիմայ այս է. բոլորովին անկախութիւն թէ կիսկատար գոյութիւն—Դերմանիոյ մէջ մեծ յուզմունք կը տիրէ այս մասին. և «ընկերական» ըսուած դասը օրէ օր զօրանալու վրայ է։ Կըսուի թէ արդէն կայսր Վիլհելմ շատ չփոթած է և Պիսմարգ խռոված։

Գաղղիոյ ժողովուրդը բաւական յառաջացած է այս խնդրոյն վրայ հասարակապետութիւն հաստատելով։ Այսու ամենայնիւ բոլորովին ազատ չէ իր ոսոխոց դաւակցութենէն, և ռամկաց կուսակցութենէն։

Երբ Լուի Ֆիլիբ գահէն վար առին և հասարակապետութիւն մը հիմնադրեցին, «Օռլէանս»ի ընտանիքը օրինօք աքսորեցին, մէյ մ'ալ Գաղղիա ոտք չը կոխելու պայմանաւ։ Մօտերս Լուի Ֆիլիբի թոռը 23 տարեկան երիտասարդ մը յանդգնած է Գաղղիա վերադառնալ սա բաղբաղիւք թէ Գաղղիոյ զաւակաց մէն լինելով կուզէ ազգին ծառայել՝ բանակը հասարակ զինուորի պաշտօն վարելով։ Հարկաւ իսկոյն կը ձերբակալի երբ օրինազանց և դատի կը քաշուի։ Դատաւորք զնա մեղապարտ կը գտանեն և երկու տարուան բանտարկութեան կը դատապարտեն. յետոյ վարչութիւնը խոհեմութիւնը ձեռք առնելով կը հաճի բանտարկութեան տեղ նորէն աքսորել. բայց նախագահը՝ երբ կը տեսնէ որ ժողովուրդին կողմանէ մեծ գրգռում ծագած է և բազքներ յարուցուած ընդդէմ այս որոշման, ազաղակելով թէ՝ թէ որ այս անպուհին ներողութիւն կըլլայ, պէտք է որ ուրիշ բանտարկեալ օրինազանցներու ներողութիւն լինի, կը պարտաւորի վարչութեան ներողամիտութիւնը զսպել։

Անգլիոյ գալով՝ ազնուապետական կառավարութեան հակ եղ յամառ ազգ մը գալով նա ևս դարին պահանջման հետ կը մղի։

Բարլամէնթը փետրվար 11 ին բացուեցաւ և Թագուհոյն կողմանէ սովորական ճառն գահէն արտասանուեցաւ։ Զարմանալին այն է որ Մեծն Պրիտանիոյ տէրութեան ուրիշ պետութեանց հետ ունեցած յարաբերութեանց վերայ եղած բովանդակութեան մէջ Թուրքիոյ վերարերեալ խօսք մը չէ՝ եղած։ Այսու ամենայնիւ, չեմք յուսար թէ Հայկական իրնդիրը Բարլամէնթի ուշադրութիւնը չի գրաւէ և նորայ վերայ աստիճ պայքար չը ծագի, քանզի Թուրքիոյ մէջ տեղի ունեցած դաժանութիւնք բոլոր լուսաւորեալ ազգերն սարսափած և զարհուրած են, մանաւանդ Անգլիոյ ժողովուրդը, որոյ պատիւն ոտքի տակ առնուած է և մանաւորապէս նորա շահն կրծանած Թուրք կառավարութեան կողմանէ յանդուգն կերպիւ և խրոխտ վարմամբ։ Թէ որ մինչև հիմայ լուռ կեցած են այս խնդրոյն վերայ, պատճառը նոյնին յուզմանց հետ զբաղեալ լինելնին է, բայց երբոր Իռլանդայի պայքարը դադրի, ան շուշտ Մեծն Մեր Մարդ (Կլատսթօն) ոտաց վրայ պիտի տեսնեմք և արդի վարչութեանը պիտի անողորմ կերպիւ բռնադատուիլն իմանամք։

ՄԱՀԱԴՈՅԺ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒԹԱՖԵԱՆ

Յաւուր որում ստիպուած ենք ծանուցանել մեր ընթերցողաց թէ Մեծ. Յովհաննէս Մութաֆեան անցեալ կիրակի օր, Փետր. 23, երեկոյեան ժամը 8 ին մահկանացուն կնքեց։ Հանգուցելոյ դամբանականն պիտի հրատարակեմք եկող թուով ի ցաւակցութիւն բոլոր պանդիտաց։

ԱԶԴ

Մեր ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք Հայկական Միութեան կողմանէ եկող ծանուցման որ կը տեսնուի ծանուցմանց սիւներուն մէջ։

ՃՕՆ ՃԷՅՔԸՊ ԱՍԹԸՐԻ ՄԱՀԸ

Այս երկրի, եթէ ոչ բոլոր աշխարհի մէջ գտնուող ամենահարուստ անձերէն մին, Ճօն Ճէյքըպ Ասթըր անցեալ շաբաթ օր իւր մահկանացուն կնքեց առաւօտեան ժամը չորսին, իր բնակարանը որ է 388 Ֆիֆթ Ավնիւ։

Այս անձի տարօրինակ բաղդը և բարքը մերայնոց բարի օրինակ և քաջալերական խրատ մը լինելու նպատակաւ՝ նորա կենսագրութիւնն գըրչի առնուեցաւ ու տպուեցաւ թերթերնուս առջի երեսին վրայ։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆ

Ասկէ իբր 400 տարիներ առաջ, այսինքն 1492ին Քրիստոփոր Գոլոմպոս Ամերիկան գտաւ։ Ասանկ մի շնորհալի գիւտ մեծ նշանակութեան արժանի նշանակութեան արժանի լինելուն՝ Ամերիկացիք արժան համարեցին գորա չորրորդ դարեդարձը պատուել մեծ ցուցահանդէսով մը։ Ասանկ մի նշանաւոր դէպք հարկաւ երկրին մէջ մեծ նախանձայուզութիւն պատճառեց, և զանազան տեղեր նորայ պատիւն ստանալու ելան։ Նիւ Եորք, Շիգակօ, Սէյնթ Լուիզ և Վաշինկթօն քաղաքները մրցողներուն գըլխաւորներն էին։ Այլ որովհետև նորայ ուր զետեղելուն որոշումը Գօնկրէսին կախում ունէր, քանզի՝ ազգային գործ մը լինելուն Ազգային ժողովին կը վերաբերէր, սորայ պատիւը՝ անցեալ երկուշաբթի օր Շիգակօ քաղաքին շնորհուեցաւ յետագայ քուէարկութեամբ։

Շիգակօ	155 Քուէ
Նիւ Եորք	112 »
Սէյնթ	27 »
Վաշինկթօն	17 »

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

—Ընթերցողք կը յիշեն անշուշտ թէ Պօլսոյ Սրբազան Պատրիարքին կողմանէ՝ Սարաճեան Վարդապետի միջոցաւ՝ կարեւոր կոնդակ մը ղրկուած էր Պիշըփ Փօթըրի, այն սիրալիր ընդունելութեան համար որով Նորին Սրբազնութիւնն պատուած էր Ամերիկայի Հայոց կղերն։ Նոյն կոնդակն անցեալ շաբթու, անգղիերէն թարգմանութեամբն հանդերձ, տրուեցաւ Փօթըր Սրբազանին, որ շատ գոհ եղած է և յայտարարած է թէ պիտի հրատարակել տայ զայն «Զըրչմէն» անուն կրօնական շաբաթաթերթին մէջ։

— —

—Վերջի պահուս առնուած նամակէ մը կը տեղեկանանք թէ Թուրք կառավարութիւնըն Ամերիկայ եկող վեց Բարբերլըցի ճամբորդներ Կ. Պօլսէն ետ ղրկած է։

— * —

—Վաշինկթօն՝ ազգային մայրաքաղաքը, երեկ մարդասպանութիւն մը տեղի ունեցաւ, բուն իսկ Գաբիթօլի, այսինքն՝ ազգային ժողովարանի շէնքին մէջ։ Կ՚երեւի թէ շատոնց հետէ ոսոխութիւն մը կը տիրէր միջեւ Թօլպի անուն երեսփոխանի և Քէնգալըի, որ է Լուիվիլ քաղաքի մէջ հրատարակուած լրագրին թղթակիցը։ Երկուքն ալ Քէնթէքիի նահանգացիք են։ Վերջի անձը խիստ ձերբակալուէր և բանտարկուէր է, դատը տեսնուելու համար։

— —

—Պէտլօզ Այլընտ կոչուած կըղզին, որ քաղաքիս առջև կը գտնուի, ուր ազատութեան հոյակապ արձանը կանգնած կայ։ Տէրութեան կողմանէ որոշուած է որ՝ ասկից յետոյ Նիւ Եորք հասնող գաղթականք հոն ցամաք ելնեն, փոխանակ Քասթըլ Կարտընի, որպէս զի խել մը անօրէն յափշտակողաց ձեռքէն ազատին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱԲ

Ազգի մը ամենազօրաւոր կապը իւր լեզուն է։ Գաղթականաց մէջ այս կապը զօրգացնել և զօրացնելը մեղ պարտք մըն է. Այս նպատակաւ թերթերնուս մէկ երկու սիւնը բանասիրական երկասիրութեան յատկացուցած ենք, ուր պիտի պարունակին ընտիր վիպասանութիւնք, մատենագրութիւնք և բանաստեղծութիւնք, որով ընթերցողք բերկրանալով՝ սրտերնուն մէջ գրականութեան սէր մը ծաւալի։

Ահա այս աղագաւ սիւներնուս մէկ բաժինը Տիկին Տիւսաբի գովելի երկին վերատպութեանը ձօնած ենք, որով կը բաղձամք հեղինակին վրայ ունեցած յարգերնիս յայտնել, և նորա սքանչելի երկովն ընթերցողաց խրատ մը տալ։

Այս տրամութիւնը կը պարտաւորիմք Տ.րթ. Տատրեանի, որոյ շնորհիւն ընագիրն ստացած ենք։ Տիկին Սրբուհիի ընտրած նիւթը վսեմ է, որ է ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ. լեզուն մաքուր և խոհրդածութիւնք սուրբ և առաքինի։

Աշխատասիրութիւնը՝ հիմայ մեծ խնդիր մը եղած է ընկերականութեան մէջ և մտաւոր անձանց խորհուրդը գրաւած է և կը գրաւէ։ Մեք որ Տաճկական կրթութեամբ հայրը և ծոյլ մեծցած ենք, աշխատութեան վրայ ծուռ աչօք կը նայինք, նաև զնա կ՚անգոսնենք, բայց աշխատասիրութիւնը երջանկութեան աղբիւրն ըլլալը տիկին Սրբուհի ճարտարութեամբ բացատրած է «Արաքսիա» վիպասանութեամբ, և նմա ապացուցած՝ թէ ամէն բղխելի բարիք կրնան ունենալ և մեղ տառապանաց մէջ ձգել. այլ անխոնջ աշխատութիւնը նոցայ կը յաղթէ և մեզ բարօրութեան պսակն կը հանէ։

Տիկին Սրբուհի աշնուատոհմ անձ մը լինելէ զատ՝ Ազգին իգական սեռին պատիւ բերած է իւր ուսմամբ, տաղանդովն և առաքինի վարքովն։ Ազգի մը լուսաւորեալ յառաջադիմութիւնը՝ նորայ մտաւորական զարգացումէն կ՚իմացուի։ Արդ՝ «Արաքսիա» երկը մեզ գոհութեամբ հպարտացնելու է. ուրեմն՝ կարդացէք ուսումնասիրեցէք և փառաւորեցէք։

ԱՐԱՔՍԻԱ
ԿԱՄ
ՎԱՐԺՈՒՀԻՆ
ԵՐԿ
ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱԲԻ

ԳԼՈՒԽ Ա.

188... տարուան Բարեկենդանի օր մ՚էր։ Բերայի փողոցաց մէջ տարօրինակ շարժում կար։ Անհամար դիմակներ խումբ խումբ կ՚անցնէին զիրար ընդհարկանելով, իրարու գրգռիչ խօսքեր ուղղելով, խնդալով, գլորելով, երգելով, ճիչեր արձակելով։

Բարեկենդանը կարծես մասնաւորապէս կարգադրուած է ի սփոփանս ընկերային խոնարհագոյն դասուց, որպէս զի իրենց աննպաստ վիճակը ճանաչելով՝ անոնք ջանադիր լինին ուրանալու զայն, պահուելով վայրկեան մի այլ և այլ զգեստուց ներքև, և առժամանակեայ տարբեր վիճակ մի փոխ առնլով՝ ուրիշ անձնաւորութիւն մի ձեւանան, և այսպէս իրենց աղքատութիւնն ու դժբաղդութիւնը մոռնան կեղծ երանութեան դիմակին ներքև։ Ուստի Բարեկենդանի նիւթական կատակերգութեան մէջ բարոյականի կատակերգութիւն մ՚ալ կը գոյանայ, այնչա՛փ մարդիկ իրենց եղածէն այլ և այլ տարբեր երեւոյթներ կը ներկայեն։

Եթէ նոյն պահուն և սահմանեալ ժամանակի համար միայն աղքատն իւր տխուր վայրկեանները կը մոռնայ կենդանութեան և խրախճանաց հոսանքէն միեւալ, հարուստը կենաց ճոխ մեօրինակութիւնը կը ձգնի ընդհատել, իւր ձանձրոյթը փարատել, և պարապոյ նեղանալի ժամերը գոնէ ձայնիւ, ազմկով, նուագարանով, հայկերոյթով, պարով, շարժմամբ և զգացմանց։ Երրորդ Ազգ մի վիճակահանութիւն մի կ՚իմացնէ ճակատագրին զոհից ի նպաստ։ Այդ հանդէսին մէջ բազմաթիւ չքնաղ և շնորհալի տիկնայք իրենց սրտին դարձուց վսեմ թելադրութեանց անսալով՝ ժպտով, քաղցր բառով, ազնուական և քնքոյշ ձեւով իպայքար կը մտնեն զիրար գերազանցելու յօժարութեամբ, իպէտս թշուառաց ստուարացնելու համար այն լումաներն որք հարուստին գրպանէն պիտի ելնեն, և կամ գթոտ սրտերէ պիտի բղխին։

Երկնային է արդարև կնոջ նազանքը՝ երբ այն կը ծառայէ աչքէն լեղի արտօսր մի ջնջելու, անօթութենէ ծնած հառաչը խափանելու, և կամ մայրենի սիրտը կրծող վիշտը թեթեւցնելու։ Ցայնժամ գթութիւնք գեղեցկութեան ու շնորհաց ներքև անձնաւորեալ կ՚ապստամբի։ Գթութիւնն անթառամ ծաղիկ մ՚է որ կը ծլի մարդկային՝ մանաւանդ կնոջ սրտին արտին մէջ։

Մինչ ուրեմն ամէն կողմ զուարճութեան աղմկալից ձայներ, շաչիւն կառաց, շարժում և երթեւեկութիւն կային, ընդհակառակն Բերայի առանձնացեալ ու անշուք փողոցի մէջ երեք փոքրիկ սենեակներէ բաղկացեալ կիսաւեր տան մի մէջ՝ արտասուաց ու հառաչանաց բարեկենդանը կը տօնուէր։

Ո՜վ սրտաճմլիկ հակապատկեր կենաց. մերձ այնչա՛փ խնդութեան ու խրախճանաց՝ այնչա՛փ սուգ և յուսահատութիւն։

Այդ տնակին մէջ կը բնակէր տարաբաղդ Վարսամեան ընտանիքը՝ երեք անձերէ բաղկացեալ։ Հայր մի կաթուածահար՝ ոչ այնչափ ամաց բեռէն ճնշուած, որքան բաղդին հալածանքէն։ Այդ մարդը բարեսիրտ, զգայուն և քաղցրաբարոյ էր, բայց մտաւորական կարողութեամբը սովորական կարգի անձերէն շատ վեր

Բ Ա Ր Ե Կ Ե Ն Դ Ա Ն

տարօրինակ կենդանութեամբ զբաղեցնել։

Մինչ փոխ առնուած անշուք ըզգեստուց ներքև աղքատը իւր չքաւորութիւնը կը ծածկէ, ինչպէս և դէմքը կ՚ածօղէ կեղտոտ դիմակի ներքև, նոյն միջոցին գեղեցիկ տիկնայք, փայլատակող աչօք, գոհ իմն կերպարանօք զոր կազդէ իրենց դիմական շնորհաց գիտակցութիւնը, և հանդերձեալ զուարճութեան մտադրութեամբ, այլ և այլ խանութներ կը խնդին. մին ծաղիկ մի կը գնէ, միւսը մետաքսեայ կերպասներ, երրորդ մի՝ ծպտուելու զարդեր. և չորրորդ մի՝ դիմական աղքատութիւնը ծածկելու և կամ չքեղութիւններն աւելցնելու արուեստական միջոցներ որոնելու համար, երեկոյթի և կամ այլ և այլ ազգային ու տարազգային պարահանդէսից մէջ փայլել ու գ՚հեր ընելու տրամադրութեամբ։

Հո՛ս ուժին վրայ կպած Ազդ մի նոր հանդէս մի, նոր զուարճութեան աղբիւր մի կ՚աւետէ յագեցած հարուստին։ Հո՛ն, նոր Թատերական ներկայացում մի կը խոստանայ գրգիռ տալ հիւծեալ ու մաշած կրից չէր բարձրանար։ Փառք գործունէութեան ու խնայողութեան՝ յաջողած էր գոհացուցիչ հարստութիւն մը հաւաքելու։ Բայց զայն կրկնապատկելու տենչն դրդեց զՊ. Վարսամեան՝ Պօրսայի խաղերուն դիմել։ Մեծամեծ յոյսերով մտաւ նա յայդ դրամական փայր անիծից՝ ուր մէկ վայրկեանի մէջ ահագին հարստութիւնք կը քայքային, և ուսկից ընչաւէտը դուրս կ՚ելնէ կատարելապէս աղքատ՝ հոգւոյն մէջ մահը կրելով. և յայնժամ նա իւր անդորրաւէտ ընտանիքը ճոխութեան և առատութեան միջէն հանելով՝ յանկարծ կը գահավիժէ զայն զրկանաց և անօթութեան գոգը։

Նոյն տխուր բախտին վիճակուեցաւ և Պ. Վարսամեան, յոյսերը փշրուած, քսակը պարպուած, պարտաւորեցաւ ունեցածները վաճառել պարտքերը գոցելու համար. և այսպէս զիւր ընտանիք մատնեց կատարեալ աղքատութեան, ինչպէս և զիւր անձ անգործութեան՝ կաթուածահար լինելով յուսահատութեանն սաստկութենէն։

(Շարունակելի)

ՍՐԲՈՒՀԻ ՄԱՐԱՊԵՏ

Շար. և վերջ

Ա՛յ, ցընծա՛ յաւէտ
դու, ո՛վ Սրբուհի
Բաւական կըրեալ ես
ցաւեր յաշխարհի.
Դու՛, ծաղիկ հաստակէզ,
կոյս, անբիծ շուշան,
Սուրբ մընալ ուխտեալ ես,
խաչն առիր նըշան.
Դու՛, որ աղնիւ սեռիդ
աղնիւ զարդն էիր,
Գեղեցկութիւն և փառք,
աշխարհք ըսհ ըներիր.
Բերիր մի քիչ դրամ
որբերուդ օժիտ,
Նախ ոք թիկունք չեղաւ
սպառուած ուժիդ.
Ա՛յսպէս, մինչ անծանօթ,
երբ պատեց քեզ հոգ,
Ասա՛ ինձ, հէգ դու կին
ինչ ըրիր արդեօք.
Դիմեցիր Արարչիդ,
ինկար գետնամած,
Պատմեցիր քո ցաւեր
հըլա՛ ի՛ւր կամաց,
Եւ երբ մի շատ լացիր
մարդոցմէ անյոյս,
Ասուած անակնկալ
յարոյց քեզ իրախոյս.
Բայց արդ, երկրորդ անգամ
լըքեալ հէգ որբեր,
Թիկունքնին կորացոյց
դառն ցաւոց նոր բեռ....
Ա՛խ, օրհնեալ ժողովուրդ,
ինչ օգուտ լալէն,
Ընչաղք լացի ձայնով
կելնեն կը քալեն.
Վրկայ մինի վշտացս
և երկնից բարձունք
Կարա՞ցի չը թափել
ես արիւն, արցունք
Բայց արցունք հա՞ց կուտան
նօթի մի որբին,
Լացէն ինչ կը շահուի
քոյր Երանուհին.
Ես գիտեմ ձեր մէջէն
թէ քանիք արդէն
Բարեդութ, ողորմած,
ձշմարիտ մարդ են.
Ես գիտեմ թէ Հայ ազգ,
ազգ է պատուական,
Որ սկսեց մի կին,
կընէ տեսական,
Եւ Հայրիկ իմ ազգին
այս է իմ պատուէր.
Որ Սրբուհուդ որբոց
առատ տաք նուէր.

* * *

Լըռեց բարի Հայրիկ,
ալ չըշարակ չը կար,
Միայն թէ կոդային
աղջըկունք արկար.
Ո՜հ, անբոյն թռչնիկներ
անցօղուն ծաղիկ
Այն ձեր լըռին լացը
խորչեց իմ ուղիք.
Եւ ո՜հ, և ես լացի,
լացի՛, ո՛վ Աստուած
Երկու աչունքս դարձան
աղբիւր արտասուաց.
Եւ ո՜հ, հեկեկանօք
ճանապարհ բացին,
Սեւաքօղ դագաղը
սուգով վերցուցին.
Ա՛յս սուտ աշխարհին մէջ
որբոց ինչ մնաց,
Արդէն մայր չունէին,
պաշտպաններն դընաց.

Ըսե՛, ո՞վ կին, այսպէս
քեզ ո՞ւր կը տանին,
Ինչո՞ւ հեռագ կուգան
ծեր և պատանին,
Ավասո՜ օրերդ անցան,
արա՛գ շատ արագ,
Կեանքըդ նուիրեցիր
սիրոյ պատարագ.
Հիմայ քեզ կ'ամփոփէ
քընարան չիր մին
Եւ ի հող իջուցինք
քու հոգնած մարմին.
Հիմայ գէթ դագրեցան
ցաւերն աշխարհի.
Եւ ալ չես տառապիր
աղնիւ կին բարի.
Անմահ ես, ո՛վ դու կին,
քեզ բիւր երանի
Դագաղիդ մէջ հանգչէ
իրրև յօրրանի.
Թող առատ իրիկուն,
ձայնիւ ըղձական,
Դամբանիդ շուրջն երգեն
սաղմոս, շարական,
Մատուռիդ մէջ անշէջ
կերմներ վառեն,
Թող խունկը չը պակսի
արծաթ բուրվառէն.
Եւ թող վարդ թափթըփեն
հրեշտակներ գոգիդ.
Լուսոյ մէջ ընկղմի
մաքրափայլ հոգիդ.

ՄԻՀՐԱՆ ՑՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

4 Յունվ. 1890 (Արեւելք)

ԱԶԴ

Հայկական Միութեան յառաջիկայ նիստին մէջ պիտի առնենախօսէ Տիար Յ. Թավշանճեան. Նիւթն է «Հայք և վաճառականութիւն». Նաև Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնախումբն իւր տեղեկագիրն պիտի բերէ.

Քարտուղար Դործադիր Ժողովոյ Հայկական Միութեան

Փ. Մ. ԱՅՎԱՏ

ԿԻՒԼԻՒՋԱՐԻ ՊԱՏԿԵՐԸ

Պատիւ ունինք ծանուցանել Հայ հասարակութեան թէ խմբագրութեանս քով կը վաճառուի այժմ Կիւլիւզարը Հայ աղջկաներ-կու տարբեր դիրքով հանուած ընտիր արձասպարներն գիւրամատչելի գներով. Սա պատկերներու տակ դրոշմուած կան Կիւլիւզարի անունը, տարիքն ու այլ ծանօթութիւններ անդգ. լեզուով, նոյնպէս ալ պատկերների ետեւի կողմն տպագրեալ կայ Լոնտոնի «Տէյլի Նիւս» լրագրոյ 89 օգոս. 27 թուին մէջ հրատարակեալ մի ծանուն Մարդասիրին՝ Վ. Կլատսթընի «Թըրքական անդթութիւնք ի Հայաստան» վերնագրով հանրածանօթ նամակէն Կիւլիւզարի վերաբերեալ քաղուած մը. Ամէն Հայ պէտք է որ ունենայ այս պատկերներէն, որոց հատը կարժէ 20 սենթ կանխիկ՝ առանց թղթատարի ծախուց.

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Կը վաճառուի խմբագրութեանս քով. Գին 20 սենթ կանխիկ.

ԱԶԴ

Հայ Օրիորդ մը՝ դրամական անձուկ վիճակի մը մէջ լինելով կը փափաքի իւր եօթն ու կէս օրթաւնոց, քառակուսի և ընտիր դաշնակն վաճառել շատ աժան գնով. Սա նուագարանն լաւ վիճակի մէջ է, և քիչ ատեն միայն գործածուած. Գինն է 175 տոլար, թէև դորա վճարուած է 400 տոլարներ.

Գնել կամ զայն տեսնել ուզող աղգայինք կրնան դիմել լրագրոյս խմբագրութեան ու ստանալ անկէ պէտք եղած տեղեկութիւններն.

ՕՐԻՈՐԴ ԲՕԶԻ ԳԷՈՐԳԵԱՆ

Տիկնանց եւ Օրիորդաց վերաբերեալ ամէն տեսակ զգեստներ ու հանդերձեղէններ ձեւող եւ կարող առաջնակարգ դերձակուհի

Թիւ 426 երրորդ ավընիւ, Նիւեորք.

Կը ծանուցանէ յարգանօք իւր հայ բարեկամուհեաց թէ ինքն՝ իւր երկար փորձառութեամբ՝ Փարիզեան և տեղական նորութեանց համաձայն (մոտա) ամէն տեսակ հագուստներ կը ձեւէ և կը կարէ խիստ գոհացուցիչ պայմաններով և չափաւոր գներով.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Այն ամէն Հայերն որք կը փափաքին դրամ ղրկել իրենց բարեկամացն թէ Կ. Պոլիս, թէ Պէյրութ թէ Իզմիր թէ Հալէպ և թէ Ցունաստանի ու Թուրքիոյ ո՛ և է մէկ կողմը, Զէք Պանք դրամատան փոխանակագիրներն պիտի գտնեն ամենաապահով, ամենաաժան և լաւագոյն.

Է. Ճ. ՄԱԹՇԻՈՒՍ և ԸՆԿ.

Սենտաուորք

Թիւ 2 Վալ Ըսթրիթ.

Նիւ Եո Ք

ԴԵՂԱՐԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ Մ. ՏԱՏՐԵԱՆ

Դեղարանիս հիմնական օրէնքն է մի միայն առաջին կարգի դեղ՞ գործածել. Դեղագրերն ամենայն զգուշութեամբ կը պատրաստուին.

Հայոց համար ընդհանուր գինն յատուկ զեղչ կը լինի.

213 Երկրորդ Ավընիւ, 13րդ փողոցի անկիւնը, Նիւ Եորք.

ՍԱՐԳԻՍ ՑՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Նկարիչ

Արեւելեան ամէն տեսակ ուտելիքներ եւ ըմպելեաց, եւ մանրավաճառ տեղական.

59 Վաշինկթըն ըսթրիթ. եւ 212 Էլտրիճ ըսթրիթ, Նիւ Եորք

Ամէն արեւելքցի մարդ որ իւր երկրի ճաշակն ու կերակուրներն չէ մոռացած, դիմելու է յիշեալն որպէս զոհ պիտի մնայ թէ գիներու և թէ տպրանաց մաքրութեան համար.

ԱԶԴ

Պատիւ ունինք ծանուցանել մեր ազգայնոց թէ Նիւ Եորք փոխադրուելէ վերջ աչքդիներէն շատ մը տեսակ տառեր գնած ենք մանր գործեր տպագրելու համար, ինչպէս՝ նամակի գլուխներ, ընկալագիրներ, պահարաններու գլուխներ, ծանուցումներ, տետրեր և այլն. Մեր գիներն համեմատաբար շատ աժան են ու տպագրութիւնն խիստ մաքուր. Մեր Հայրենակիցք կերպով մը քաջալերած կը լինին Ազատութիւնն եթէ իրենց անդգիներէն տպագրութիւններն ինչպէս նաև Հայերէններն մեզ յանձնեն.

Վէսթ Հոպոքընեան

ԱԾՈՒԽԻ ԵՒ ՓԱՅՏԻ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Կարմիր և ճերմակ մոխիր ունեցող ածուխ ամենաաժան գներով

Գրասենեան և վաճառատեղի

197 Բլէյնթըն Ավ.

Զէմպրս Փողոցի առջև

ՎԷՍԹ ՀՈՊՈՔՆԵԱՆ, Ն. Ճ.

Ճ. Փաթըրսըն — Տէր

ՏՔԹ. Զ. Բ. ԹԷՈԴՈՐԵԱՆ

249 ՍաուԹ Ֆօրթ Ընտրէտ

Հավվէյրրի մօտ.

ՊՐՈՒՔԼԻՆ, Ն. Ե.

Հիւանդ կընդունի

8 էն մինչ 10 ա. ժ.

12 էն մինչ 2 ե. ժ.

6 էն մինչ 8 ե. ժ.

ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵՐ

8 էն մինչեւ 12

Թէլէֆոն քօլ 26 Վէլիըմսպըրկ

P. CHANKALIAN,

MERCHANT TAILOR.

455 Palisade v. I et Griffith & Bower Sts

Jersey City Heights, N. J.

ՏՔԹ. Մ. ԱԹԹԱՐԵԱՆ

644 Իսթ 6 րդ Փողոց, Նիւ Եորք

Հիւանդ կընդունի

2 է մինչ 4 ե. ժ.

Ֆ. ՔԷՇՈՒԱՊ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Գոհարներու, ժամացոյցերու եւն. եւն.

Ամէն տեսակ դրամ կառնուի մեր մոտ, Դարձեալ մեր մոտ գտնուող կրնայ ուղղիլ ամենայն ժամացոյցներու, ինչպէս նաև Դամբարանի Գլուխներ

Թիւ 451 Փալիսատ Ավընիւ, Կրիֆիթ Փողոցին մօտիկ

Ճերզի Սիթի, Նիւ Ճերզի.

H. CASKENS,

Dealer in Foreign & Domestic

Fruit & Fancy Groceries

337-9 CENTRAL AVENUE,

Cor. Lincoln Street, Jersey City Heights

ԸՆԿԵՐ ՊԱՆԴԽՏԻՆ

Գրեց

Հ. ԷԿԻՆԵԱՆ

1886է ի վեր Տ. Հ. Էկինեանի գրած բանաստեղծութեանց մի հաւաքածուն է այս, որ տեսեր առ տեսեր ըսկսած է հրատարակուիլ հեղինակի տպարանէն. Իւրաքանչիւր տեսեր կը բովանդակէ ութն երեսներ. Բաստնալ փափաքողք դիմելու են հեղինակի կամ «Ազատութիւն»ի խմբագրութեան հասցէին. Թղթատարի ծախքը ձրի է. Գինն է ամէն մի տեսարին 2 սենթ և կանխիկ.